

ւանդման եղանակին, բանաձեւերուն, հարկը զգացած են հայացնելու այդ գործն ալ: Եթէ Մխիթար ծանօթ էր այդ բառին, դարձեալ այն է պատճառը՝ որ այդ գործին հրատարակութեան առթիւ պատեհութիւնը ունեցած էր ստուգելու ատոր նշանակութիւնը:

Անշուշտ « Գիրք Առաքինութեանց » անծանօթ չէր Երկից վարդապետաց, ինչո՞ւ այն ատեն անոնց անտեսու՞մք: Հաւանաբար ՆՆԲ գայն նկատած էր ինդրոյ առարկայ կենդանիին յատուկ անունը և ոչ թէ հասարակ անուն մը:

**ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Մենք մեր նախընթաց էջերուն մէջ անցողակի ակնարկեցինք ՆՆԲ-ի բազմակողմանի առաւելութիւններուն: Ստուգիւ ակադեմական գործ մըն է ան, արժանի որ և է մեծ ազդի մը: Կը բաւէր հոս մեր տուած համեմատութեանց սիւնակներու մէջ տեսնել իր բերած նորութիւնները, իր մեկնութիւններուն, իր վկայութիւններուն ճոխութիւնը: Չկայ բառ մը որ վկայութեամբ հաստատուած չըլլայ: « Երկից վարդապետաց » անմահ գործը, առարկայ բազմաթիւ հայ և օտար բանասէրներու հիացումին, դեռ երկար ատեն պիտի պահէ իր արժէքը: Ան է որ հիմ ծառայած է բոլոր ազգային բառարաններուն. Աճառեանի Արմատականը շատ կը պարտի ա՛նոր, որուն հանդէպ արդարեւ խոր յարգանք ունի ան:

ՆՆԲ-ի սիւնակը, դէմ յանդիման զրուած Ռոշքեանին, կ'ապացուցանէր այն բազմականութիւնը, այն լրջութիւնը որ իր նկարագիրը կը կազմէ: Երբ բառ մը տարակուսական է, քննելի, և կամ երբ՝ ո՞ր և է հեղինակի մը քով կիրակուած չէ, դուրս կը մնայ « Երկից վարդապետաց » ընտրութենէն, ինչպէս տեսանք սգոր, լագանի, լագուզանեմ, լաշիմ բառերու քննութեան առթիւ:

Չտու՞մք, մաքրագործու՞մք, հսկայ աշխատանք մըն է հոն կատարուածը և ոչ թէ խճողումի: Ութսունեւեօթը տարի վերջ Մխիթարի Հայկազեանէն, Հ. Մկրտիչ Աւզերեան, Հ. Գարրիէլ Աւետիքեան, և Հ. Խաչատուր Սիւրմէլեան, ճգնաջան նուիրումով կը փարին ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ մը գաղափարին: Յայտնուած էին նոր ձեռագիրներ, որով և նոր բառեր: Հորի էր ամբողջացնել ՀՆԲ-ը: Կատարելագործել, ճոխացնել գայն: ՀՆԲ-ը արդէն մարգարէացած էր թէ պիտի գայ օր մը՝ որ երբ նախնեաց նոր գործեր երեւան գան, Մխիթարի ապագայ աշակերտները պիտի լծուէին նոր աշխատանքի. « Եթէ Տեառն կամք իցին, զկնի հասանելոյ և սյլոց բազմագան մատենից՝ ընծայեսցի քեզ (խօսքը ուղղելով հայ ժողովուրդին) այլ Բառարան ինչ, առաւել ճոխ, և ընդհանրական և բազմալեզու »:

Յիսնեակ մը տարիներ կը բոլորին անխոնջ վաստակի՝ այս Նոր Հայկազեանի սկզբնաւորութենէն՝ որ է 1784, մինչեւ վերջաւորութիւնը իր ներկայ ձեւովը 1834-ին: Տասներկու հատորներ կ'ըլլան արդիւնք այդ ժրաջան նուիրումին: Տասներկու հսկայ հատորներ, որոնց մէջ վկայութիւններու ճոխութիւնը կը կազմէր մեծագոյն առաւելութիւնը և որ կը ներկայացնէր բանասիրական գեանի վրայ եւս անժխտելի կարեւորութիւն մը: Սակայն ինչպէս հոգալ ծախսը այդ բազմահատոր աշխատութեան: Գանուեցան բարերարներ, բայց մասի մը կամ քանի մը հատորներու, այլ ոչ ամբողջութեան: Ծրագիրը մը կը մշակուի այն ատեն նոյնինքն աշխատակիցներէն՝ համառօտելու, վերածելու կատարուածը: Այս նոր ձուլումն ալ դիւրին բան չէր, սակայն, գրեթէ ծայրէն սկսիլ մըն էր: Գործին սկիզբ կը տրուի. բայց ահա մահը որ կը տանի նախ Հ. Խ. Սիւրմէլեանը 8 Մայիս 1827-ին, և քանի մը ամիս վերջ՝ Դեկտ. 24-ին նոյն տարւոյն՝ Հ. Գ. Աւետիքեանը: Հսկայ